# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Վինդորան ՍՊԸ-ն ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-178/24 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի |
|---|---|
| | տեխնիկական բնութագիրը |
| 24 | Թևքերի ծավալուն գրպանների կափույրների վրա մշակված են 3-3.5x9-9.5 սմ չափսերի, իսկ ձախակողմյան գրպանի վրա` 13-13.5x9.5-10.0 սմ չափսերի կպչուն ժապավեններ: Ձախ թևքի գրպանի վերնամասում 3-3.5x9-9.5 սմ չափսի կպչուն կտորի վրա ամրացվում է ՀԱԷԿ բառը, որը եզրակարված է բաց մոխրագույն մետաքսե թելով: Տառերը նույնպես ասեղնագործվում են բաց մոխրագույն մետաքսե թելով, յուրաքանչյուր տառի բարձրությունը 1.5-2 սմ, լայնությունը` 1-1.5 սմ, բառի ընդհանուր երկարությունը 8-8.5 սմ: Տառաչափը կիրառել համաչափության կանոնով: Գրպանի ներքևի հատվածում ամրացվում է կպչուն կտոր, որի վրա 7սմ տրամագծով ամրացվում է ՀԱԷԿ-ի լոգոն (գունավոր): Գրպանների թեքությունը դեպի ներս, ուսակարերի նկատմամբ` 120 աստիճան: Վրադիր գրպանների կափույրները զարդակարված են 0,5սմ լայնությամբ կարով: Կրծքամասի ձախ կողմում մշակված է 2,5-3սմ x 12,0-12,5սմ չափսերով կպչուն ժապավեն, որի ամբողջ երկայնքով կպչուն կտորի վրա ասեղնագործվում է ՌԵԺԻՄԻ ԲԱԺԻՆ բառը` եզրակարված բաց մոխրագույն մետաքսե թելով: Տառերը նույնպես ասեղնագործվում են բաց մոխրագույն մետաքսե թելով, յուրաքանչյուր տառի բարձրությունը 1.5-1.8 սմ, լայնությունը` 0.8 սմ, բառի ընդհանուր երկարությունը 8.5-9սմ: Տառաչափը կիրառել համաչափության կանոնով: Թևքերը ներկարված են ամբողջովին փակ զույգ կարերով: Արմունկի մասում մշակվում են լրացուցիչ կրկնակի զարդակարերով ուղղանկյունաձև արմնկակալ-ներ: Կողքերի, թևքերի և ուսերի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով: Թևքերի ներքևի մասում մշակված են անկյունաձև պատաներ, որոնք բազկակալում կոճկվում են 2,5սմ լայնությամբ կպչուն ժապավենով: Բաճկոնի օձիքի ներքևի հատվածում մշակվում է լրացուցիչ դետալ, որի տակ տեղադրվում է |

| | |
|---|---|
| | չափս-հասակի ստուգիչ պիտակ: Տաբատը ուղիղ կարվածքով, մշակված գոտիով, որը կոճկվում է մեկ օղակ կոճակով, գուլֆիկը կոճկվում է նեյլոնե շղթայով: Առաջամասում կողքից, թեք ներկար-ված գրպաններ, 14-15 սմ բացվացքով: Գոտին մշակված է 6-7 գոտեմակօղակով: Տաբատի հետևա¬մա¬սում մշակված են կափույրով կտրված գրպաններ` երկու կոճակով կոճկ¬վող: Կողքերից մշակված են ուղղանկյուն կափույրով ծավալուն երկծալ վրադիր գրպաններ: Կափույրները կոճկվում են 2.5 x 4,5-5 սմ չափսերի երկու կպչուն ժապավեններով: Գրպանի լայնությունը 17-18 սմ, իսկ երկարությունը` 19-20 սմ, կափույրի լայնությունը 5,5-6սմ: Տաբատի առաջամասում մշակված են քառանկյուն ծնկակալներ, եզրերը կարված զույգ կարերով: Բաճկոնի և տաբատի միացման բոլոր կարերը կարվում են շղթայական փակ զույգ կարերով: Համազգեստի կոճակները` 17-20մմ տրամագծով, չորս կարանցքերով, գույնը` սև: Յուրաքանչյուր աշխատակցի համար պահանջվում է անհատական կար: Փաթեթավորումը` պոլիէթիլենային թափանցիկ պարկեր, պարկի մեջ 5-6 լրակազմ, պարկերը` պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու քանակը, չափսերը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Виндоран ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-178/24 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
| --- | --- |
| | технические характеристики |
| 24 | |